


ՊԱՅՄԱՆՔ

Տարեկան դիմելու և փոխադրվելու 8 ՄԶԸ:
Վերականգնելու և փոխադրվելու 10 ՄԶԸ:
Վերականգնելու և փոխադրվելու 4 ՄԶԸ:
Վերականգնելու և փոխադրվելու 3 ՄԶԸ:
Վերականգնելու և փոխադրվելու 2 ՄԶԸ:
Վերականգնելու և փոխադրվելու 1 ՄԶԸ:



ՀԱՅԿԱՍՏԱՆԻ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ՏՆՏԵՍԱԿԱՆ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ 29 ՀԱՅՏԵՄԲԵՐ

ՔԱՂԱՔԱԿԱՆ

Կարնոյ կողմէն եկած լուրերը դարձեալ կարեւորութիւն կառնուն: Մոլթիստար վաշայի պաշտօնական մէկ հեռագրէն կը հասկցուի որ անառիկ կարծեցեալ Տէվէ-Պոյնուի բարձանց վրայ նոր պարտութիւն մը կը կրէր է: Ստուգելու Տէվէ-Պոյնուի դիրքն որ խիստ ամուր է, Բէօքըրի Բէօյի և Կարնոյ մէջ կարգ մը բլուրներէ կը բաղկանայ և բնական ամրութեանց գիծ մը կը կազմէ: Բայց Օսմանեան բանակը ժամանակ չունեցաւ հոն պէտք եղած արուեստական ամրութիւններ և հոգէ պահանջներ չլինելու և անոնց ետին ապաստանելու, թէպէտ կըսուէր թէ չլինեալ են: Ռուսը Օսմանեան յետո նահանջող բանակին ետեւէն ինչպիսի ստիպելին դայն բաց ճակատամարտ մը մղել անբաւական թնդանօթներով, որք չէին կրնար թշնամեցն կրկնապատիկ աւելի հրանօթայ կրակին դէմ կենալ: Ասկէ զատ ուրիշ պատճառ մ'ալ Օսմանեան բանակն ստորին դիրքի մը մէջ կը դնէր, այն է հոկտ. 3/15 էն 'ի վեր միշտ իւր ռազմավթերն ու պաշարներն այրելով յետո նահանջելու հարկը: Այս պարագայից և տրամադրութեանց մէջ Օսմանեան բանակը յաղթութեան չէր կրնար ակնել կաշել, ուստի չհասկցուի թէ ինչպէս բանակին հրամանատարը ճակատամարտն ընդունէր է նոյն ստորնութեան վիճակին մէջ, որով Կարնի առջև ալ հոկտ. 2/14 ի ճակատամարտը մղած էր: Միւս կողմէն, մայրաքաղաքէն օգնութիւն տանող Ռիֆաթ վաշան, ըստ Պատիւթի վերջին տեղեկութեան, Տէվէ-Պոյնուի ճակատամարտին հասեր ու վերադարձուեր է: Այժմ Մոլթիստար վաշայի բանակը գրեթէ շնչուած և իւր հրանօթայ մէկ մեծ մասը թշնամուցն ձեռք անցած է: Կարծողներ կան սակայն թէ տակաւին ամեն բան կորստած չէ, և կարելի է յաջողութեամբ դիմադրութեան միջոցներ ձեռք առնուլ: Մոլթիստար վաշա կը ծանուցանէ թէ Կարնոյ ամրութեանց մէջ քաշուեր է, և Պաշարպողութեան զուգորդութեան ցոյց տուած երկու տուրքներն կը զանգատուի: Ինչէն արդեօք այժմ իւր յատակագիծն ու գիտաւորութիւնը: Կարնի բաւական ամրութիւններ ունի և Մոլթիստար վաշա կը յուսայ թերեւս որ կրնայ դիմադրել հոն թշնամեցն մինչև որ իրեն օգնութիւն հասնի: Բայց այն ատեն պաշարուած կը համարուի և չկրնար շարժիլ ու գործ տեսնել: Ուրիշ յատակագիծ մը համեմատ Օսմանեան բանակը կամ մանաւանդ անոր

մնացեալ բեկորները կրնան դէպ 'ի Տրապիզոն և Երզնկա քաղաքները վերահասելու համար, այն ատեն կարելի է Պաթմուի բանակին ոյժ տալով Կարնի օգնութեան զրկել, մինչև դեռ Մոլթիստար վաշա ալ Ռուսաց հաղորդակցութիւնները խզելու աշխատի: Բայց պէտք չէ մոռնալ որ անոնք տակաւին պարզ յատակագիծեր կամ կարծիքներ են, և Մոլթիստար վաշայի հեռագրին նայելով ինքը Կարնոյ մէջ պատասխարուած է: Ռուսը գուցէ բաւական զօրք չունին, բայց հեծեալորայ միջոցաւ կրնան հաղորդակցութիւնները կտրել և պաշարն արգելուլ: Կարնոյ մէջ բազմութիւն քաղաքացի ժողովուրդ կայ, որ չկրնար երկարժամանակեայ պաշար ման դիմանալ: Այսու ամենայնիւ Մոլթիստար Ռուս լրագրին հեռագրական մէկ լուրը թէ Ռուսը Կարնոյ գրաւեր են, կանխահայ համարելի է, քանզի Կարնի կրնայ դոնէ քանի մը շաբաթ դիմադրել, և գուցէ մինչև այն ատեն բազմութիւն օգնութիւններ հասնելով, ոչ միայն Կարնին ազատի, այլ և թշնամեցն մեծ հարուածներ տրուին:

Մեր անցեալ թիւով թուրքական Հայաստանի մէկ մասին դրաման դէմ բողոքած էինք: Դժբաղդաբար մեր կարծիքը սին չէ, և Գաղղիական Տէպա լրագրին մէկ յօդուածն ալ ըստուգելու կը հաստատէ թէ Ռուսը փոքր Սաիդ մէջ երկրակալութիւններ ընելու գիտաւորութիւն ունին: Այս նկատմամբ Արաք Տաղի ճակատամարտը խիստ ծանր հետեւութիւններ կրնայ ունենալ: Արգէն պատերազմին սկիզբը կարծողներ կային թէ Ռուսա իւր պատերազմական պատրաստութեանց սկսած ժամանակ Ռուսիայի կողմէն այն ցոյց մը պիտի ընէր Պաշարպիւնի դրամելով, և իւր գլխաւոր ճիգն Սաիդ մէջ պիտի թափէր: Արաք Տաղի վերջին ճակատամարտին վրայ Ռուսաց կողմից տեսնուած բանակը բաւական յաջողութեամբ զրկուած երկու հալարին անոնց ձեռքն անցնի, հաւատարմութեան է որ 1829 ին նման դիւրաւ ետ չտան: Ասիոյ մէջ Երազական տէրութիւնները շահ չունին, բայց Անգլիայէն: Մայրաքաղաքի Բիւստանական դեպքան Պ. 15 յըրտ այս վրտանգը նշանակած էր 1877 մայիս 30 թուականաւ իւր մէկ պաշտօնագրին մէջ: Պ. 15 յըրտ կը ցուցնէր թէ Ռուսա թէպէտ Պաշարպիւնի և Ռուսիայի տիրէ, Երազական շահերը զինքը կը պարտաւորեն իւր յաղթութիւնը չափաւորել, բայց թուրքական Հայաստանի գրաւման նկատմամբ Երազական անտարբեր է, բայց Անգլիայէն: Երբ Ռուսա իմանալով ինչեալ զ աւառը գրաւէ, Տիգրիսի և Եփրատի հովիտներն ալ ձեռք անցնելով հոսկ

ուրեմն Պարսից ծոցին կը մերձենայ՝ կամ ուղղակի և կամ Պարսկաստանի միջոցաւ, որ գրեթէ Ռուսիոյ հըպատակ իշխանութիւն մը կը լըլըլ: 15 յըրտ ասկէ Հնդկաստանի համար վտանգ կը նախատեսէ, բայց դարման մը չցուցներ և չըսեր թէ արդեօք Անգլիա Ռուսաց այս երկրակալութիւններն արգելելու համար թուրքիոյ պիտի օգնէ: Արգէն Ռուսա 1828-29 ի պատերազմաւ բոլոր Կովկասիոյ ծովերէն և Անգլիայի ու Ռուսիայի նաւահանգիստները գրաւեց: Այսօր, եթէ կիսով չափ ալ յաղթող ենէ, Պաթմուի պիտի պահանջէ, և ապագայ պատերազմի մը մէջ Տրապիզոնը գրաւել պիտի ուզէ: Գուցէ իւր բանակները Սուլթան Մուրատ Ա. ի, Պաշարպիւս Ա. ի, և Մէհմէտ Բ. ի բանակներուն ճանապարհները բռնեցելով, մինչև Կ. Պոլսոյ Ասիական երկրքը գան և թուրքիոյ մայրաքաղաքը պաշարելու փորձ փորձեն: Այն ատեն Սուլթան Ռուսական լիճ մը կը լըլըլ, և Եւրոպայ իրաւամբ կրնայ անհանգստութիւն զգալ Ռուսիոյ այն չափ մեծութենէն և զայն արգելուլ: Թերեւս Ռուսիոյ բուն նպատակն ըլլայ Պաթմուի և փոքր Ասիոյ մէկ մասին գրաւումը: Բայց այս նպատակն արգելելու համար Եւրոպայ գործնական միջոցներ ձեռք պիտի առնու, հոն է բոլոր խնդիրը:

Ռուսիայի պատերազմական ասպարէզէն առնուած լուրերն յառաջապահաց մանր կուռներ միայն կը ծանուցանեն առանց կարեւորութեան, թէ և յաջողութիւնն Օսմանեան զինուոր կողմէնացեր է: Կուրքօ զօրավարին սպանման զոյցը չհաստատուեցաւ, որ Ռուսաց համար մեծ կորուստ մը կրնար համարուիլ: Եթէ թէպէտ վաշայի մէկ հեռագիրը կը ծանուցանէ թէ Չէրքէզ Հայէթ և Վեհ Սուլթանին բանակի օգնական Մահմուտ և սենեկապետ Բեաղիմ պէյերուն հըրամանաց ներքին թեթեւեղ կողմէն հաւաքուած զինուոր երկու հալարիւր Չէրքէզ հեծեալոր հարկը խաղաղի հանգիստը զանցը վաներ են, խաղաղները 10 մեռեալ և 20 վիրավորեալ ունեցեր են, և Չէրքէզները թշնամիէն տանելու հաղար ոչխար յախշտակեր են, որոց հինգերորդ մասն յիշեալ Չէրքէզներուն տրուեր է, և մնացեալ բանակին համար գընւեր է հատը 5 զըլ ի: Սիւլթան վաշայի մէկ հեռագիրն ալ Պէպրովայի կողմէն անուրիւն մը կը ծանուցանէ: Պաթմուէն Տէրքիզ վաշայի հեռագիրը թշնամեցն շարժումները կը ծանուցանէ: Կերեկի որ Ռուսը այն կողմէն ալ բաւական օգնութիւն առած և մեծ թնդանօթներ բերել տուած են յարձակողականի սկսելու համար: Բայց պատերազմին ամենէն կարեւոր

կէտը Բիշկաւ է, որուն հաղորդակցութիւնները կարուած վիճակի մէջ են: Կաղի Օսման վաշա անմիջական օգնութեան կը կարօտի, և Մէհմէտ Ալի վաշա, որ Հէրսէքէն ետ կանչըւելով Բիշկաւն ազատելու դժուարին պաշտօնն ընդունեց, Սօֆիայի մէջ զօրք համախմբել սկսած է: Մէհմէտ Ալի վաշայի և Շէֆքէթ վաշայի կը մնայ Կաղի Օսման վաշայի վիճակը բարւոյն, քանզի Սիւլթան վաշային մինչև ցարդ ըրած զննութիւններէն կը տեսնուի թէ չպիտի կրնայ Ռուսաց դիմերը խզել:

Ահաւասիկ Տէվէ-Պոյնուի ճակատամարտին վրայ Կաղի Ահմէտ Մոլթիստար վաշային հոկտ. 24 թուով զըրկած հեռագրին պատճենը:

“Երէկ, ժամ երկուքին միջոցները, Տէվէ-Պոյնուի մեր գրից դէմ բանակեալ թշնամին յարձակողական շարժում մը ըրաւ, և իւր բոլոր զօրութեամբ մեր կեդրոնին վրայ քաշելու երեւոյթ ցուցուց: Ժամ երեքին միջոցները թնդանօթի կուռն սկսելով, թշնամեցն զօրքն երկու թիւ բաժնուեցաւ և յառաջ քաշեց:

“Միմիջապէս մեր պահեստի դունդէն հինգ վաշտ բաւական դատուելով մեր աջ թիւը զրկուեցան թշնամուցն յարձակման դիմադրելու, որ շատ չանցաւ հրացանի կուռն սկսաւ: Ռուսաց հրացանաւորները մեր դիրքը յարձակմամբ առնելու փորձ փորձեցին, բայց բուռն կրակի մը հանդիպելով շտապաւ յետո նահանջելու հարկադրեցան, և մերիններն ալ յառաջ քաշել սկսան:

“Թշնամին իւր վաշտերը վերակազմելով նորէն յարձակեցաւ, և մերիններն ետ մղուելու վրայ էին, Կարնէն դուրս ելած հեծեալ և հետեակ օժանդակներն և երեք չորս վաշտ նոր զօրք ալ թիւն օգնութեան հասան, և ատենց անվեհեր քաշուեցան: Բայց նոյն միջոցին մեր ձախ թիւին կողմէն գտնուող թշնամեաց զօրքաժինն իւր ճակատը փոխելով ձախէն մեր կեդրոնին վրայ քաշեց որ վեց վաշտ զօրք է տասն և հինգ հրանօթէ պաշտպանեալ երեք ամրութեան կը բաղկանար: Եւ որովհետեւ այս ամրութիւնները դեռ կատարեալ պաշտպանութեան վիճակի մէջ գրուած չէին, մեր ձախակողմեան բարձունքը բռնող վաշտերը չկրնար դիմանալ: Տեսնելով որ իրոց այս վիճակը միւս թիւին ալ ամենայն կ'ապառնար, երկու վաշտ զօրաց զըրկուած անցաւ և այն վտանգեալ կողմէն դիմելով մեր տկարացեալ զօրքերն համախմբեց և նորէն 'ի կուռն դարձանելով վտանգեալ դիրքն ազատեց և թնդանօթ յետո նահանջելու հարկադ

Ե ՏՈՒՐԱՆԻ ԴԻՄԻՏ ԻՍԿՐԱՅ
ՉԱՆԱԹԱՆ ԴՕԸ ԽԱՆՆ